

Ն. ՅԱ. ՄԱՌԸ ԵՎ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ
ՀԱՄԵՐԱՇԵՈՒԹՅՈՒՆԸ

Ն. Յա. Մառք, սովետական հանճարեղ գիտնականը, որ գիտության համար նոր ուղիներ է հարթել և նոր հորիզոններ ծավալել, քացառիկ ցայտուն երևույթ է մեր պատմական մեծ իրականության մեջ: Գիտության պատմության մեջ նա մտել է որպես հանճարեղ լեզվագետ, որը ստեղծել է լեզվաբանական մի նոր, մատերիալիստական ուսմունք և գիտական ուսումնասիրությունների համար գծել հեռանկարներ, որոնք առաջ մարդկային մտքին անմատչելի էին թվում:

Բայց Մառք միայն լեզվագետ չէր: Իր լեզվաբանական աշխատություններում նա մեծագույն չափով դուրս է գալիս զուտ լեզվագիտական ուսումնասիրության շրջանակներից: Նա լայնորեն ընդգրկել է պատմության, հասարակագիտության, մտածողության պատմության, հնագիտության, դրականագիտության բնագավառները:

Լեզվագիտական հետախուզությունները բաց արին նրա առաջ-ժողովուրդների իսկական պատմության, նրանց կուլտուրայի և մտածողության ցայտուն պատկերը: Խիզախությամբ ու վճռաբար հրաժարվելով հասարակական և գիտական նախապաշարումներից, գիտնականների «քարացած» տրագիցիաներից՝ Ն. Յա. Մառք հայտնաբերեց իր ուսումնասիրած ժողովուրդների հնագույն փոխհարաբերությունների կատարելապես նոր, անսպասելի մի աշխարհ, որը հակասում էր այն ժամանակվա պաշտոնական գիտության մեջ տիրապետող տեսակետներին:

Մարդկության կյանքի անցած էպոխաների ուսումնասիրությունը չէր շեղում Մառի ուղղությունն արդիականության սուր հարցե-

րից: Գիտնական-մարտիկի ամբողջ հերոսական կյանքը, սկսած վաղ երիտասարդության տարիներից, հազեցած էր մի ձգտումով՝ որքան կարելի է լավ, խորն ըմբռնել արդիականության ձևավորվող հարաբերությունները, պարզել մարդկության իսկական պատմությունը, ընդգծել «փոքր» ժողովուրդների նշանակությունը պատմական ընդհանուր ընթացքի մեջ:

Մառի գիտական հայացքների զարգացման պրոցեսը լավ ընդգրկելու և նրա խոր ուշադրությունը դեպի «փոքր» ժողովուրդների միճակը պարզելու համար անհրաժեշտ է դեթ հարևանցի գծերով ծանոթանալ Մառի քաղաքական դիմանկարին, որն անխզելիորեն կապված է նրա գիտական աշխատանքի հետ:

Մառը պատկանում էր այն գիտնականների թվին, որոնց համար գիտությունը և կյանքը անբաժանելի հասկացություններ են, նա չէր ընդունում ինքնապարսիակ, մեկուսացած գիտություն, գիտություն կյանքից դուրս, հանրայնությունից դուրս, քաղաքականությունից դուրս: Նա իրավունք ուներ ասելու. «Պնդում եմ հատկապես իբրև գիտնական, որ ամեն մի գիտնական ոչ միայն գիտության տրիբուն է, այլև հանրայնության տրիբուն»¹ Արդեն Հոկտեմբերյան ռևոլուցիայից հետո նա գրում էր. «Այն գիտությունը, որը կտրված է հանրայնությունից, արդի շինարար ուղեկավար ստեղծագործական հանրայնությունից, և ընթանում է մեր աշխատանքային կյանքից դուրս, գիտություն չէ, այլ գիտության ժխտում, էլ ավելի վատ — գիտական մտքի ժխտում: Գիտական մտքի յուրաքանչյուր Պրոմեթեոսին ժայռին դամել էր նշանակում, երբ միջին դարերում գիտնականներն իրենք, ի պաշտպանություն, ինչպես նրանց էր թվում, անկախության ու ազատության, կյանքից հեռու էին քաշվում»...²

«XX դարում կյանքի հետ շկապակցված գիտությունը կամ կեղծավոր մի պնդում է, կամ միջնադարյան մենաստանների մի վերապրուկ: Ն՞իս սոցիալիստորեն կառուցվող երկրում գիտությունը չի կապակցվում էկոնոմիկայի և հանրայնության հետ, ապա այդ գիտություն է առանց ուղիների, առանց մեթոդի»³ Իր գիտական կյանքի բոլոր 45 տարին Մառը նվիրեց այն պայքարին, որ

¹ Ճառ գիտ. աշխատողների Համառուս. Ց-րդ համալուծարում, II. P. 1929 թ. № 2, էջ 19:

² Значение и роль изучения наименьшинства в красведении, II. P. 6. I, էջ 246:

³ К вопросу об историческом процессе в освещении яфетической теории, II. P. 6. III, էջ 153:

մղում էր նա այդ միջնադարականության դեմ, շրջապատող գիտական այն միջավայրի դեմ, որ սահմանազատվում էր կյանքից և չէր ընդունում քաղաքականություն գիտության մեջ:

Ն. Յա. Մառի, որպես գիտնականի, աճումը սերտորեն կապված էր ուսական հասարակական, քաղաքական և գիտական կյանքի մի ամբողջ շրջանի հետ և ավելի սերտ՝ ռեոլուցիոն շարժման ուժերի, հատկապես մտավոր ուժերի կուտակման հետ ցարական Ռուսաստանում:

Գործացիների 1905 թվի դյուղացիական ապստամբության, կամ, ինչպես ինքն էր անվանում՝ «ռեոլուցիոն կերպով տրամադրված ժողովրդի ասպետականորեն պանծալի՝ գործելակերպի»-ն անմիջականորեն ակնատես դառնալով՝ Ն. Յա. Մառը արձագանքեց նրան մի շարք հրապարակախոսական հոդվածներով: Նրանցում նա ընդվզում է Կովկասի կառավարման այն մեթոդի դեմ, որ կիրառում էր ազգային անհանդուրժողականությունը բորբոքող ցարական կառավարությունը, կրքոտությունը հարձակվում էր և Կովկասի շովինիստական այն շրջանների վրա, որոնք թշնամություն էին սերմանում հայերի և վրացիների, քրիստոնյաների ու մահմեդականների միջև, հանդես է գալիս ի պաշտպանություն «ազգության՝ ընդդեմ ազգայնամոլության» և, վերջապես, ողջունում է այն ուսմունքը, որը, ինչպես նա գրում է, «առաջժամիակն է, որ կարողացել է գործնական ճանապարհ բանալ դեպի Կովկասյան զանազան ազգությունների միեմեցումը և համերաշխության հաստատումը նրանց ամենալայն խավերում»:¹ Այդպիսի միակ, կենսունակ ուսմունք նա համարում էր սոցիալ-դեմոկրատիայի դավանած ուսմունքը. նա գրում էր, որ այդ ուսմունքը «ծավալում էր ժողովրդի համար սոցիալական կարգերի այնպիսի հեռանկարներ, որոնք սփռվում էին նրա անուրախ աշխատանքային կյանքը թերևս միայն երազներում կամ հեքիաթների մեջ»:² Մարդարե չպետք է լինել՝ պնդելու համար, թե այդպիսով վաղ թե ուշ, տեղի է ունենալու զանազան կովկասյան ազգությունների ժողովրդական մասսաների լայն նդրաշրայումը նոր սոցիալական ուսմունքի անձնվեր գործիչների կողմից խորը հերկված հողի վրա, և այդ եղբայրացումը, խորտակելով Կովկասի ցեղամիջյան համերաշխության դեմ

¹ Из гуринских наблюдений и впечатлений (по поводу Бакинских событий) СПб, 1905, էջ 26—27.

² «Письмо к кавказской молодежи», газета «Рассвет» 27 նոյեմբ. 1905 թ. № 222.

ծառայած ոչ միայն կրօնական, այլև ազգային արգելքները, որոնք նվիրագործվել էին դարերի ընթացքում, կստեղծի առավելագույն հաստատուն պայմաններ տեղական համակովկասյան պրոգրեսի համար... Արդի ուսմունքը (սոց. դեմոկր.) լինելով զուտ մատերիալիստորեն սոցիալական մի ուսմունք, հանդիստ ու ձիշտ ըմբռնվելու պարագայում բնավ չի սպառնում ոչ մի ժողովրդի տեղական հոգևոր կուլտուրային: Նրա հականացիոնալիզմն ուղղված է ոչ թե ընդդեմ ազգությունների, այլ ընդդեմ հակասոցիալական նացիոնալիստական հավակնությունների, որոնք ձեռնտու են որոշ դասակարգերի, բայց վնասակար և մինչև իսկ կորստաբեր են ժողովրդի ամենից ավելի մեծաթիվ մասի, բանվոր մարդկանց համար, հետևաբար և ամեն մի ազգության համար»¹

Ողջունելով սոցիալ-դեմոկրատական ուսմունքը, Մառը դեռևս 1905 թ. պարզորոշաբար արտահայտում է իր համակրանքը այն ժամանակ երիտասարդ բուլշևիզմի նկատմամբ՝ գուրիական ռևոլուցիայի կապակցությամբ: Ահա թե նա ինչպես է նկարագրում Գուրիայում տեղի ունեցած մի ժողով, որտեղ հանդես էին եկել բուլշևիկներն ու մենշևիկները. «Այդպիսի ժողովներից մեկում հանդես եկավ որպես դաստրույտը՝ այդ շրջանում հայտնի հոետոր Խտիս Մկալոբան, որն իսկապես աչքի էր ընկնում իր պարզ դատողությամբ ու իրազեկությամբ: Վիճում էին ս.-դ. պարտիայի երկու ֆրակցիաները՝ այսպես կոչված «մեծամասնություն» և «փոքրամասնություն» կողմնակիցները: Խտիս Մկալոբան մեծամասնության հոետորն էր, բայց և միակ հոետորը: Նրա դեմ ելույթ ունեցան մի շարք հակառակորդներ... Խտիս Մկալոբայի օպոնենտները (այսինքն մենշևիկները) ջանում էին անպատրաստ ու անիրազեկ հասարակությունն իրենց կողմը գրավել՝ նրան հետաքրքրող հարցերի վերաբերյալ բարձրագույն, շոյող ֆրազներով: Մակայն մեր հոետորն իր հավասարակշռությունը չէր կորցնում և աշխատում էր քայլ առ քայլ ջախջախել իր օպոնենտներին»...² Հետաքրքրական է, որ այս քաղվածքը Ն. Յա. Մառի հոդվածից բուլշևիկյան «Искра»-ն բերել է 1905 թվի սեպ. 29-ի համարում, հետևյալ հավելումով. «Սոց.-դեմ. միտինգ նկարագրող պրոֆետորն ակնհայտորեն նախապատվություն է տալիս «մեծամասնությանը» հանդեպ «փոքրամասնության»:

Մառի տարաձայնությունը վրացական մենշևիկ-նացիոնա-

¹ «Письмо к кавказской молодежи», газ. «Рассвет» № 222.

² «Из гурийских наблюд. и впечатл.». էջ 20—21:

լիստների հետ, որ սկսվել էր նրա գիտական կյանքի առաջին իսկ քայլերից, առանձնապես սրվեց փետրվարյան ռևոլուցիայից հետո և մինչև սովետական կարգերի հաստատումը Անդրկովկասում: Այդ տարածայնությունը ցայտուն կերպով արտահայտվեց Կովկասում համալսարան ստեղծելու հարցի քննարկման ժամանակ:

Մերկացնելով «Կարապի, ձկան և խեցգետնի», այն է՝ վրացական սոցիալ-դեմոկրատիայի, հայկական ազգային պարտիայի (դաշնակցության) և համամոտավմանական կովկասյան կադմակերպության դաշինքը, մանավանդ զատապարտելով վրաց մենշևիկներին, որոնք «փոխանակ 1905—6 թ. թ. լոզոնգի՝ «Պրոլետարներ բոլոր կրկնների, միացեք», պատերազմի սկզբից առաջ էին մղում նացիոնալիստներ բոլոր երանգների, միացեք» դեմիղը՝ Մառը գրում էր, որ նացիոնալիստական հոսանքը Կովկասում հասկանալի է «որպես բողոք ընդդեմ ամեն մի կենդանի երևույթ խեղդող նախկին ռեժիմի, որպես նրա ծնունդ, բայց ոչ մի ռեալ արդարացում չունի արդի կյանքի պայմաններում»:²

Ուտի՝ գտնելով, որ զուտ վրացական համալսարանի ստեղծումը «սպառնում է... դառնալ կովկասյան ժողովուրդների փոխադարձ պառակտման և՛ փոխադարձ խորթացման սրման աղբյուր»,³ Մառը հանդես էր գալիս հօգուտ համակովկասյան համալսարանի ստեղծման, որ «կամրապնդի, ինչպես Կովկասում ապրող ժողովուրդների հանրային համերաշխությունը, այնպես էլ նրանց բոլորի համերաշխությունը ռուս ժողովրդի հետ»:⁴

Պարզ կերպով գիտակցված քաղաքական սիմպատիաներն էին պատճառը, որ Մառը գիտնականների մեջ առաջինը ընկալեց Հոկտեմբերյան Մեծ Ռեւոլուցիան: Սովետական իշխանության առաջին իսկ օրերից և մինչև իր կյանքի վերջին տարին նա անդրդվելի կանգնած էր սովետական գիտնականների առաջին շարքերում:

Սովետական իշխանության հանդեպ բռնած իր դիրքը Մառը նկարագրեց է ՀամԿ(բ)Պ 16-րդ համագումարում գիտության և տեխնիկայի աշխատողների անունից արտասանած ողջունի ճառում 1930 թվին. «Հոկտեմբերյան առաջին իսկ օրերից ես՝ իմ ուժերը ներածին չափ, կոմունիստ ընկերների հետ ուս-ուսի տված և հա-

¹ О Кавказском университете в Тифлисе, ИАН, 1917 г., էջ 1499.

² Նույն տեղում, էջ 1503.

³ Նույն տեղում, էջ 1509.

⁴ Նույն տեղում, էջ 1515.

մահնչուն կոփվածք ունեցող անպարտիականների հետ մեկտեղ, օգնել եմ՝ իր թափով անօրինակ ռևոլուցիոն գիտական-կուլտուրական շինարարության գործին... Գիտակցելով ապարադաքականության ֆիկցիան և բնականորեն այն դեն նետելով, ռևոլուցիոն ստեղծագործական ուժերի շնորհիվ, երիտասարդացած իմ ուժերի շափով ես մեր ապրած սուր դասակարգային պայքարի մոմենտում հաստատապես կանգնած եմ գիտական-կուլտուրական ճակատի մարտիկի իմ դիրքերում՝ ի պաշտպանություն պրոլետարական գիտական թեորիայի պարզորոշ ընդհանուր գծի, կոմունիստական պարտիայի ընդհանուր գծին»:

Եվ վերջապես իսկական ռևոլուցիոններ-գիտնականի, բուլշեփ-գիտնականի քաղաքական ուղու ավարտման պսակ հանդիսացավ այն, որ Մառը 1930 թվին մտավ բուլշեփիների Կոմունիստական պարտիայի շարքերը:

Մառի քաղաքական հայացքները անխզելիորեն կապված են նրա գիտական ստեղծագործության հետ: Նա միշտ ասում էր, որ «քաղաքականորեն ընկալվող իր ճառերը բխում են իր ներքին անկեղծ գիտական համոզմունքներից»: Իսկ նրա գիտական համոզմունքները, նրա հանճարեղ կոնցեպցիան լեզվագիտության բնագավառում, — հաբեթական թեորիան, որն աճում և կառուցվում էր ոչ թե նախապես յուրացրած և գիտակցված մարքսիստական դրբույթների, այլ լեզվի ուսումնասիրության հիմքի վրա, որ սերտորեն կապակցված էր նյութական կուլտուրայի և հանրայնության պատմության ուսումնասիրության հետ, ընդհուպ մոտեցավ մարքսիստական-լենինյան սոցիոլոգիայի հիմունքներին:

Ն. Յա. Մառի ընդհանուր քաղաքական և հասարակական այս դիմանկարը, որ գծեցինք թուրքիկ կերպով, բնավ երբեք սպառիչ չէ խիստ բազմակողմանի մեծ գիտնականի համար, այլ հանդիսանում է լուկ պարզաբանում այն համարձակ եզրակացությունների ու բացառիկ հայտնագործությունների, որոնց հանգել էր նա հարազատ Կովկասին նվիրված իր աշխատությունների հետևանքով, Կովկասի ժողովուրդների պատմության և լեզվի ուսումնասիրության և համամարդկային կուլտուրայի ստեղծման գործում նրանց գերը որոշելու հետևանքով: Նրա ստեղծած հաբեթական թեորիան ծագել ու աճել է հատկապես Կովկասի լեզուների ուսումնասիրության հիման վրա, այն լեզուների, որոնց նա համախմբել է, որպես նորահայտ ընտանիք, կոչելով այն հաբեթական:

Հին լեզվագիտությունը, որ խարսխվում էր պլասմորապես

այսպես կոչված «հնդեվրոպական լեզուներին» ուսումնասիրության վրա, լեզուների ընտանիքը սահմանելիս իր դասակարգումից դուրս է գցել Կովկասի լեզուները, ինչպես նաև մի ամբողջ շարք ուրիշ «բարբարոս» լեզուներ, որոնք չէին հարմարվում այն սխեմաներին, որ մշակվել էին լեզուների հնդեվրոպական ընտանիքի ուսումնասիրության հիման վրա: Այդպիսի անտեսումն ու արհամարհանքը դեպի Կովկասի լեզուներն իր հիմքում ունենր ռասայական թեորիան, այսինքն այն ուսմունքը, որ սահմանազատում է ընտրյալ, առանձնացած, հատուկ կերպով օժտված հնդեվրոպական ռասան անկուտուրական ու «հետամնաց» փոքր ազգերից ու ցեղերից: Վերջիններիս հետամնացությունը բացատրվում էր ռասայական կանխորոշված կուլտուրայիս անելու անընդունակությամբ, իսկ նրանց լեզուները կոչվում էին «թաշտանների», «կենդանիների», «անդրածինների» լեզուներ, «օտար ռասաների», այն է՝ դեղին, կարմիր, սև ռասաների լեզուներ, որոնք դատապարտված են մահացման շնորհիվ իրենց իսկ բնության: ¹

Մտքը, որ իր ողջ կյանքը նվիրեց Կովկասի ժողովուրդների լեզուներին ուսումնասիրությանը, վճարար ժխտեց ռասայական թեորիայի հիմքը, ռասայական լեզուների գոյությունը, հանճարեղ խորաթուփանցությամբ բացահայտելով բուրժուական գիտնականների «բարացած» հայացքների դասակարգային էությունը: Նա զրուում էր. «Ցեղի և ազգի մաքրությունը, արյան անխառնելիությունը իդեալիստական ֆիկցիա է, որ արդյունք է առանձնացած լինել ցամ կացող իշխանության, հավիշտակիչների դասակարգի հազարալյա տիրապետության: Առանձնացած ռասայական կուլտուրաներ նույնպես չկան, ինչպես որ չկան ռասայական լեզուներ»: ²

«Լեզվաբանական նոր ուսմունքը ոչ միայն վերացնում է առանձին լեզուների մեկուսացած լինելու հարցը, այլ միաժամանակ միավորում է առանձին, այսպես կոչված ռասաները, որոնք իրանցին լուր մեկ-մարդկային ռասայից առաջացած՝ տիպոլոգիական տարբեր գոյացումներ են այդ ռասայի նյութական և սոցիալական զարգացման տարբեր աստիճաններում»: ³

Հախուռն խիզախությամբ Ն. Յա. Մառը ավերում էր հնդեվրոպական լեզվագիտության ռասայական թեորիայի ամբողջ շեն-

¹ Предисловие к Яфетич. Сборнику, ИР, 5. I, էջ 251:

² Значение и роль изучения наименьшинства, И. Р. 5. I, էջ 241:

³ Origine japhétique de la langue basque, «Язык и литература» ժողովածու, 5. I, էջ 260:

քրո՛ւ Թնդում եմ,— գրում էր նա,— որ ոսսայտրեն տարբեր լեզու-
ների հնդեվրոպական ընտանիք գոյություն շունի: Միջերկրածո-
վյան երկրների հնդեվրոպական լեզուները՝ երբեք և ոչ մի տեղից
չեն եկել՝ ոչ մի հատուկ լեզվական նյութով, որ բխելիս լինե՛ր
լեզուների ինչ որ ոսսայապես առանձին ընտանիքից կամ էլ ա-
վելի քիչ իր ծագումով առնչվեր ինչ որ ոսսայապես առանձին
մայր լեզվի հետ: Ի դեպ, սկզբում եղել է ոչ թե մեկ լեզու, այլ
բազմաթիվ ցեղային լեզուներ. միասնական մայր լեզուն գիտա-
կան ֆիկցիա է, որ իր դերը կատարել, վերջացրել է»...¹

«Ըթե լեզուները անգամ անհետացել են, ապա ոչ թե իբրև
ըստ բնության մահացողներ (այդպիսի լեզուներ չկան), այլ որ-
պես մարդկության, գլխավորապես կուլտուրական մարդկության
կողմից ոչնչացվող լեզուներ»: ²

«Հաբեթական թեորիան,— գրում էր Մառը,— խախտում է
ոչ միայն ումանա-գերմանական, այլ համաեվրոպական, համ-
հնդեվրոպական էգոցենտրիզմի հենարանը»: ³

Ինտելուցիոններ - գիտնականի թեորիան ահա այսպես էր
պաշտպան կանգնում «այլադգիներին», ճնշված ցեղերին ու ժո-
ղովուրդներին, մերժում էր բուրժուական լեզվագիտության արհա-
մարհանքը նրանց նկատմամբ, պահանջում էր պատշաճ տեղ
հատկացնել նրանց՝ մարդկության ընդհանուր պատմության մեջ:

Դեռևս երիտասարդական տարիներում, Վրաստանի ազատա-
գրության վերաբերող ումանտիկական երազանքների շրջանում
Ն. Յա. Մառը վճռում է իրեն նվիրել վրացագիտության: Խոր սե-
րը դեպի հայրենիքը, Վրաստանի վերածնության երազանքները,
Կովկասի ժողովուրդների միասնական ուղու՝ գիտակցությունը—
այս բոլորը երիտասարդ Մառին տանում էր դեպի Վրաստանի,
իսկ այնուհետև նաև ամբողջ Կովկասի լեզվի, կուլտուրայի և
պատմության ուսումնասիրությունը:

Դիմելով Կովկասի ժողովուրդների պատմության ուսումնա-
սիրությանը՝ Ն. Յա. Մառը առաջին իսկ քայլերից սկսած՝ դուրս
է դալիս հին կովկասագիտության տրադիցիոն շրջանակներից-
«Կովկասագիտությունը,— նկատում է նա,— իր այն մասերում,
որոնք նվիրված են հնադարյան ազգային գրավոր կուլտուրա ու-
նեցող ժողովուրդներին, այն է՝ հայերին և վրացիներին, ունի մի

¹ Индоевропейские языки Средиземноморья, И. Р., 6, 1, էջ 185:

² Яфетический Кавказ и третий этнический элемент, ИР, 6, I, էջ 90:

³ Чем живет яфетическое языкознание, И. Р., 6, I, էջ 177:

խոշոր մեղք... դա լիակատար անտարբերությունն է, եթե չասենք
ավելին, դեպի Կովկասի բուն բնակիչները հանդիսացող գրազուրկ
ժողովուրդների պատմական բախտի գիտական պարզաբանումը»¹

Բուրժուական լեզվագիտությունը հայտարարում է, որ «Կով-
կասը իր մեծահարուստ լեզվագիտական փաստերով... լեզվա-
գիտական պրպտումների համար լավ պայմաններ չի ներկայաց-
նում, քանի որ այնտեղ չկա «մեծ գրավոր կուլտուրական լեզու,
այնտեղ չկա սանսկրիտ, չկա հունական, լատինական և այլ հա-
մաշխարհային մեռած լեզու, որից որևէ ինքնուրույն ուսմունք
կառուցելիս, կարելի լիներ կառչել, ինչպես բուքսիրից: Բանից
դուրս է դալիս, որ Կովկասը պատմություն չունի»²

Այնինչ «այդ աշխարհը լի է դարերի երկար շարանի, հաղա-
թամյակների ընթացքում նրա կատարած ստեղծագործական աշ-
խատանքի վավերագրերով, այն է՝ գրավոր և իրեղեն, կենդանի
և մեռյալ հուշարձաններով»³

Չնունամոլս լինելով Կովկասի ուսումնասիրությանը ն. Յա.
Մառը խզում է իր կապերը պատմությունը միմիայն գրավոր աղ-
բյուրների հիման վրա՝ ուսումնասիրելու տրադիցիոն եղանակի
հետ:

Գրական հուշարձաններին օգնության պետք է գա հնագի-
տությունը, նյութական կուլտուրայի ուսումնասիրությունը, քանի
որ հաճախ ճշարտը խոսում են «եղուցիոն տեղաշարժերի մա-
սին, այնինչ այնքան առատորեն գրված հայրենի պատմությունը
գեթեզմանի պես լուռ է նրանց մասին»⁴

Հնագիտության հետ մեկտեղ Մառը նշում է կենդանի լեզվի
ուսումնասիրության բացառիկ կարևորությունը. «Ոչ մի Կրեսոս,
ոչ մի բրիտանական կամ ամերիկական բանկ, ոչ մի ազգային
կամ միջազգային կապիտալ չի բովանդակում կուտակումների՝
ամբողջ մարդկության կողմից իր մարդկային ստեղծագործական
գոյության ընթացքում կատարած կուտակումների՝ այնպիսի
հսկայական քանակ, ինչպես լեզուն... Լեզուն լուսավորում է
մարդկության պատմության սկզբնական ստադիաները, նա նույն-
պես, ինչպես և նյութական կուլտուրայի հուշարձանները, վկա-

¹ Кавказоведение и абхазский язык, 1925 г., II. P., с. I, էջ 63.

² Предисловие к Яфет, Сборн. ИР., с. I, էջ 25 և

³ Кавказ и памятники его духовной культуры, Պատրոգրադ, 1919 թ.

⁴ Ани. Книжки. ист. города, Изв. ГАИМК урл 105, էջ 10.

յում է, որ տեղի են ունեցել վիթխարի ուսուցիչոն տեղաշարժեր և «շարժումներ շատ հազարամյա ինքրի, հարյուր հազար տարիների ընթացքում»¹...

Այսպես Մառն ստեղծում է իր մեթոդը, լեզվագիտական պալեոնտոլոգիայի մեթոդը, որ լեզվագիտությունը կապակցում է ազգագրական դիտողությունների, հնագիտական պրպտումների, պատմագրական ուսումնասիրությունների հետ:

Կովկասը միասնորին ուսումնասիրելու հետևանքով Ն. Յա. Մառը ստեղծեց հայ-վրացական ֆիլոլոգիայի հատուկ շկոլա, որը ծագեց երկու ժողովուրդների՝ հայերի և վրացիների կուլտուրական հիմքերի ընդհանրությունից: «Փոխադարձ դրացիական հարաբերությունները հայերի և վրացիների միջև այնքան բազմազան էին, ինտենսիվ և մտերմական, դրանցից ուրվագծորեն սկիզբ են առնում այնքան բեղմնավոր հետքեր, որ գործի միայն այս մեկ կողմը բավական կլիներ՝ հարուցելու Հայաստանի և Վրաստանի անցյալ բախտի համատեղ ուսումնասիրության անհրաժեշտության հարցը»²,— գրում էր Մառը:

Հայ-վրացական ֆիլոլոգիան դրեց իրապես գիտական հումանիտար կովկասագիտության հիմքը:

Անի քաղաքում կատարած բազմամյա պեղումները, Հայաստանի և Վրաստանի հնադարյան գրական հուշարձանների, հայերեն և վրացերեն լեզուների ուսումնասիրությունը հնարավորություն տվին Ն. Յա. Մառին «բացահայտելու փոխհարաբերությունների մի ապշեցուցիչ պատմություն, որ արմատապես խորտակում է Կովկասի ժողովուրդների հին և հնագույն դարաշրջանների պատմության նացիոնալիստական կամ տրագիցիոն կառուցումները»³:

Հակառակ այն տրագիցիոն պատկերացմանը, ըստ որի հայերի, վրացիների և մոսուլմանների վրա պետք էր նայել որպես միմյանց հետ դարեր թշնամական հարաբերությունների մեջ գտնվող ժողովուրդների, Ն. Յա. Մառը բացահայտում է այն սերտ կապերը, որոնք Կովկասի ժողովուրդներին կապում են իրար հետնրանց պատմական կյանքի առաջին իսկ քայլերից: Պատմական պրոցեսը Կովկասում, ինչպես այն ուրվագծում է Մառը, արդյունք

¹ Одомашнение собаки. Труды лаборатории Генетики АН., էջ 23.

² Об единстве задач армяно-грузинской филологии, Тифлис, 1902 թ. էջ 6.

³ Кавказоведение и абхазский язык, И. Р. 4. I, էջ 77.

է նրա տերիտորիայի վրա բնակվող ժողովուրդների ոչ թե ներփա-
կորեն առանձնացած, այլ համատեղ ստեղծագործական շանքերի
և կուլտուր-պատմական համագործակցության, անկախ այդ ժո-
ղովուրդների ազդեցութիւնից ու կրօնից:

Ն. Յա. Մառն ապացուցել է, որ «Կովկասը երբեք չի եղել
լոկ մի պարանոց, որտեղ պատահաբար հանդիպել են... տար-
բեր ծագում ունեցող, միմյանց համար խորթ, ռասայաբար թըշ-
նամի ժողովուրդների հոսուն զանգվածները: Այդ հակասում է
իրականութիւնը,— դրում է նա,— այդ թշուրիմացութիւնն է, որը
սակայն, նույնպես պատահական չէ, այլ արդյունք է դասակար-
գային քաղաքականութիւն»¹

Այսպես «Կովկասի բարձրագիւր տերիտորիայի վրա, ասես մի
զնդանի վրա կոփվեց ամբողջ տեղական բնակչութիւն մի ընդհա-
նուր բախտը: Նրան... զանազան կողմերից հասցնում էին ծանր
հարվածներ, որոնք անտարակույս ընդհանուր նշանակութիւն ու-
նեին թե հայերի, թե վրացիների համար, սկզբում ասորա-րաբն-
լացիները, ապա հին հույներն ու հին պարսիկ միապետները,
պարթևները և հոմեական զորավարները, Բյուզանդիոնները և
Մասանյանները, արաբները... թուրքերը և մոնղոլները... չհաշվե-
լով հյուսիսային ժողովուրդների՝ ինչպիսին են խազարները կամ
ավելի ուշ՝ լեզգիները, բազմապատիկ ներխուժումներն ու ասպա-
տակները»²

Ն. Յա. Մառն այս հիմնական դրույթը, Կովկասի բոլոր ժո-
ղովուրդների հնագույն միասնութիւն, համագործակցութիւն
սկզբունքների վրա հենված նրանց միավորման մասին, բացա-
հայտվում է կովկասագիտութիւնի նվիրված նրա բոլոր աշխատու-
թիւններում:

Հայաստանի և Վրաստանի հնադարյան նյութական հուշար-
ձանների ուսումնասիրութիւնը, մասնավորապես Գեորգի Մերչուլի
«Գրիգոր Խանձթեցու վարքի» վրացական ձեռագրի գլուտը Երուսա-
ղեմում, որ կատարել է Ն. Յա. Մառը, ցույց տվեց, որ վրացի-
ները հին դարերում երբեք էլ չեն խզել իրենց մերձավոր շփումն
ամբողջ հայ աշխարհի հետ:

«Աշխարհիկ կրթութիւնն ունեցող վրացական հասարակութիւն
համակրանքը դեպի հայերը, ամենից առաջ վրացական արքունի-
քի համակրանքը, արքունիք, որ հոգ է տանում պետականութիւնը

¹ К истории Кавказа по данным языка, Тифлис, 1933, стр. 5

² Об единстве задач арм.-груз. филологии, Тифлис, 1902 г., էջ 2.

Վրաստանում զարգացնելու մասին, — շթույացավ մինչև վրացական թագավորության վերջին օրերը, որոնք հաջորդել էին Ռամբայի պանծալի օրերին... Այդ համակրանքը, — գրում էր Մառը, — շարունակում էր զգացվել... հատկապես այն ժամանակ, երբ դուրս էին կանգնում եռանդուն, Վրաստանի անկախությանը ձգտող կառավարիչները: Հայերից օգտվում էին ոչ միայն առևտուրն ու արդյունաբերությունը երկրում բարձրացնելու նպատակով, այլև ադմինիստրացիայի մեջ և դիվանագիտական հարաբերություններում: Հայերն զգալի դեր էին խաղում նաև վրացիների ռազմական գործում: Ամբողջ Վրաստանում լավագույն ռազմիկի միակ էր վայելում հայազգի զորավար Զաքարեն, որը ըստ վրացական տարեգրիչների արտահայտության «բոլոր ժամանակակից իշխանների մեջ աչքի էր ընկնում անօրինակ քաջությամբ և փայլուն կերպով միացնում էր իր մեջ բոլոր աստվածային ու մարդկային արժանիքներն ու առաքինությունները»¹

Այսպիսով «ինքնուրույն մտածելակերպ և հատկապես անկախ գործելակերպ ունեցող վրացիները, ազգային պարզորոշ իդեանները հետամտելով և դրանք եռանդուն կերպով իրագործելով հօգուտ հայրենիքի, մեծ համակրանքով էին վերաբերվում դեպի հայերը, օգտվում էին նրանց աջակցությունից»²

«Միավորման գիտակցական՝ ձգտումով՝ ծագում էր հատուկ ազգային մտապայծառացման մոմենտներին թե՛ մեկ, թե՛ մյուս կողմից, երբեմն էլ երկու կողմից: Միավորման փորձերը արտահայտվում էին մասամբ քաղաքական ոլորտում ժամանակավոր կամ մշտական սյուզերենա-վասալական հարաբերության ձևով, մասամբ հոգևոր աշխարհում՝ եկեղեցու միասնության և զրական շփման ձևով»³

«Գրական շփումը հանդիսացավ որպես մի արտացոլում հայ-վրացական հոգևոր կյանքի միասնության՝ տեղական քրիստոնեական եկեղեցու գոյության առաջին դարերում և ստեղծեց նորմեր, որոնք ժառանգեցին հնագույն սերունդները... Գրավոր շփումը, — պնդում է Մառը, — հանդիսանալով որպես միավորիչ գործոն, զուգահիշում է բուն իսկ հայկական և վրացական դպրության ծագմանը»⁴

¹ Об еденстве задач арм.-груз. филологии, էջ 5.

² Նույն տեղ, էջ 5.

³ Նույն տեղ, էջ 10.

⁴ Նույն տեղ, էջ 14.

Հայկական և վրացական միջնադարյան գրականության փոփոխարբերությունները պարզելիս Ն. Յա. Մառը նորից է ընդգծում հայերի և վրացիների կուլտուրաների, իսկ սկզբնապես և լեզուների՝ ընդհանրությունը, որը հետքեր է թողել ժողովրդական էպոսի և ժողովրդական երգերի մեջ: Այս միտքը բացահայտվում է նրա մագիստրական դիսերտացիայի՝ «Վարդանի առակների համաբաժունները» աշխատության մեջ: Խոսելով առակների լեզվի մասին, որը հազեցած է միջնադարի կենդանի խոսքի ձևերով ու արտահայտություններով, Ն. Յա. Մառը նշում էր, որ վարդանի առակների պահպանած ժողովրդական ձևերը ներբերում են փաստերի նկատելի բաժին ի հաստատումն հայկական և վրացական լեզուների ազգակցության:

Կուլտուրաների ընդհանրությունն արտացոլվել է և հին վրացական եկեղեցական գրականության մեջ, որի վրա, ինչպես ցույց է տվել Մառը, ուժեղ ազդեցություն են գործել հայ եկեղեցական գրքերը և որն սկսվել էր հայերենից, հունարենից, ասորերենից և մասամբ արաբերենից կատարված թարգմանություններով:

Այդպիսով ընդգծելով հայ գրականության համերաշխությունը վրացականի հետ՝ Մառը ցույց տվեց, թե ինչպես կովկասյան աշխարհի ամբողջ կուլտուրական կյանքն ուղղվում էր դեպի ժողովուրդների միավորման ստեղծագործական հունը: Եվ երբ միավորման այդ իդեան իրագործում չէր գտնում քաղաքական կյանքում, հին դարերում նա շարունակում էր տիրապետել ուղեղներին, հին դարերում նա ծառայում էր որպես իդեալ, որը բացվում է մեր առաջ զանազան գրական գործերում»:¹

Վերջապես՝ Ն. Յա. Մառի կատարած Անիի պեղումները, «այն երջանիկ քաղաքի, ինչպես գրում էր նա, — որտեղ պահպանվել են Առաջավոր Ասիայի երեք կուլտուրական ժողովուրդների՝ հայերի, վրացիների և պարսիկների մի քանի դար տևած խաղաղ քաղաքային կյանքի և պարսիկների մի քանի դար տևած խաղաղ քաղաքային կյանքի համակեցության իրային վկաները», — ուժեղ հարված հասցրին շովինիստական պատմագիտությանը, բաց անելով հնադարյան քաղաքի կյանքի ապշեցուցիչ պատկերը:

Ինժե գիտնականի հզոր քննադատական միտքը այսպես դեն էր նետում բոլոր գիտական նախապաշարմունքները կովկասի ժողովուրդների պատմության ուսումնասիրության բնագավառում,

¹ ИАН, 1910 №., էջ 441.

կործանելով նացիոնալիստական, տրադիցիոն պատմագիտության գիտական կառուցումները, և բացահայտում էր Կովկասի ժողովուրդների փոխհարաբերությունների կատարելապես նոր, իսկական պատմությունը:

Ն. Յա. Մառի հանձարեղ հայտնագործումների նշանակությունը բացատրիկ է: Նրանք ուղղված են մի նպատակի՝ «Տօգուտ մարդկության ներքին-կուլտուրական համակեցության՝ նոր հիմքերի վրա վերականգնել հին համերաշխությունը»: «Նրանք ստեղծում են իդեական նոր հող Կովկասի բնակիչների միասնության համար, նրանք կատարելապես շոշափելի են դարձնում այդպիսի միասնության անհրաժեշտությունը... «Երա անհրաժեշտ լինելը, — դրո՞ւմ էր Մառը, — մեզ համոզում է նաև այդ երկրի բնական ուժերի տնտեսագիտական ուսումնասիրությունը, որպիսի անհրաժեշտության մասին է խոսում նմանապես դարերի ընթացքում քանիցս կրկնվող, փայլուն արդյունքներ տվող փորձը՝ կառուցելու Կովկասի կյանքը այնտեղ բնակվող ժողովուրդների միահամուռ ջանքերով...»

Իր ազդակցության գիտակցությամբ պետք է տողորվի Կովկասի ամեն մի ժողովուրդը, նրա, որպես պրոպրետի, բնականապատմական անհրաժեշտագույն ֆակտորի նշանակությունը պետք է գիտակցեն առաջին հերթին առավել առաջավոր ժողովուրդները, նրանց առավել ազատախոհ մասը, երիտասարդությունը, որ ապագայի իսկական նախաձեռնողն է»:¹

Չպետք է մոռանալ, որ Մառի եզրահանգումները, որոնք այսօր մեզ համար հնչում են որպես միանգամայն արդարացի ու բնական, 40 տարի սրանից առաջ խիստ տարրնթաց էին պաշտոնական գիտության դրույթներին: Մասն առաջինն արտահայտեց այն միտքը, որ Կովկասի ժողովուրդների ճակատագրերը սերտորեն կապված են ոչ միայն միմյանց հետ, այլև դրացի ժողովուրդների ճակատագրի հետ, անկախ նրանց ազդությունից և կրոնից: Մինչև Մառը ոչ ոք չի մտածել Կովկասի ժողովուրդների ազգակցության և հնագույն միասնության հնարավորության մասին:

Մառի հայացքները, նրա ուսմունքը, որ հիմնովին խախտում էր գիտության բնագավառում ձևավորված բոլոր պատկերացումները, գիտնականների շրջանում առաջ էին բերում անվստահություն, անըմբռնողություն և ժխտական վերաբերմունք:

¹ Чем живет афетическое языкознание, ИР., 4. I, էջ 178.

Ն. Յա. Մառն իր ստեղծագործական ողջ կյանքը նվիրեց գիտական աշխարհի, գիտնականների միջնադարյան հայացքների և հնացած տրադիցիաների դեմ պայքար մղելուն: Նրան գրեթե ոչ ոք չէր պաշտպանում, գրեթե ոչ ոք չէր ընդունում, — նա գտնվում էր, կարծես, դիտական ընդհատակում: Ն. Յա. Մառը դառնությամբ նշում էր, որ «հասարակական հետաքրքրության ակնհայտնի մակընթացության և մասնագետների շրջանին պատկանող մի քանի հզակի համակրողների առկայության հետ մեկտեղ նկատելի է ոչ միայն տեղատվության երևույթ, այլև՝ թշնամանք, ասես թե, անըմբռնողություն գիտնականների մեջ, որ ոչնչով չի կարելի վերացնել»:¹

Արտասահմանում Մառի աշխատություններն անվանում էին «կասկածելի սովետական ապրանք», «սովետական պրոպագանդի տարօրինակ խառնուրդ լեզվագիտական դրույթների հետ, որոնք միայն քաղաքավարությունից դրված կարելի է անվանել պարզապես ոխկոտ փորձերը», — ինչպես գրում էր Ֆրանսիական հայտնի լեզվագետ Մեյեն իր մի ոեցենզիայում:²

Ռուսաստանում հանդես էին գալիս զեկուցումներով այն մասին, որ հանձարեղ գիտնականի պնդումները շատ հետաքրքրական են, բայց հասարակ մահկանացուներին անհասկանալի, ուստի հարկավոր է շարունակել աճեցնել հնդեվրոպաբանական լեզվագիտության դրույթները, որոնք հասկանալի են «նորմալ» ուղեղներին:

Աստազույնս հարձակվում էին Մառի վրա վրացական նացիոնալիստները, որոնց զայրացնում էին նրա պնդումները հայերի և վրացիների կուլտուրաների ընդհանրության, վրացական գրականության վրա պարսից գրական սյուժեների ունեցած ազդեցության, Աստվածաշունչը և այլ վրացական եկեղեցական գրքերը հայերենից թարգմանված լինելու մասին:

Կովկասի կուլտուրաների փոխադարձ կապերը ժխտող հետազոտողները «հիշեցնում են, — գրում էր Մառը, — իրենց վաղուցվա նախորդներին, միջնադարյան դպիրներին, որոնք ձեռագրերում ջնջում էին հայերենից թարգմանված լինելու վերաբերյալ

¹ Расселение языков и народов, Под знаменем марксизма, 1927 г. № 6, էջ 25:

² Մ ա ռ ի «Языковая политика яфетической теории и удмуртский язык» աշխատության Մեյեի ոեցենզիան:

ժատնանշումը, որպեսզի ծածկեն այդպիսի «խայտառակ» փաստի հետքերը»¹ Նրանք հանդես էին գալիս մամուլում, մեղադրելով ն. Յա. Մառի այն բանի համար, թե նա ատում է այն ամենը, ինչ վրացական է և կասկածելիորեն կապված է հայերի հետ. առանձին ելույթներում ասվում էր, թե ն. Յա. Մառը կաշառված է հայերի կողմից կամ գտնվում է «Ֆիզիկական և մտավոր ծայրահեղ հոգնածության վիճակում»:

Պակաս կատաղությանը չէին հարձակվում Մառի վրա և հայ նացիոնալիստները, որոնք չէին վստահում Մառի Անիի ավերակներում կատարած հայտնագործություններին, նայում էին Անիի վրա որպես նեղ-ազգային սեփականության:

Յարական կառավարության վերաբերմունքն արտահայտվել է Ադիեի պրիստավի խոսքերում, որ բերում է Հ. Ա. Օրբելին իր հիշողություններում: Պրիստավը Մառին խորհուրդ էր տվել թաքցնել հայերից պեղումների նշանակությունը, ապա թե ոչ «նրանք կգոռողանան»:²

Մառն այն ժամանակ իրավունք ուներ դառնությամբ ասելու իր մասին. «Գիտական մեծակությունը լավագույն դեպքում ծանր անհատական ապրում է, իսկ վատթար դեպքում՝ շափազանց անձեռնառու դիրք»:³

Բայց ի հակակշիռ կատաղի ժխտումներին կամ առնվազն Մառի մատուցած ծառայությունների մասին լռություն պահպանելուն գիտական շրջաններում, գնալով ավելի էր ուժեղանում երիտասարդ հանրայնության հետաքրքրությունը: Պատասխանելով կովկասյան շովինիստներին՝ մի շարք թերթեր հանդես եկան Մառի պաշտպանությամբ:

«Պետք է հարգալից դուրս իջեցնել Մառի առաջ այն բանի համար, որ նա իր հետազոտություններով ցույց տվեց հայկական, վրացական և մուսուլմանական կուլտուրաների փոխհարաբերությունները, մատնանշեց հեռու անցյալում ապրած տանջանքների, չարչարանքների, ուրախությունների ընդհանրությունը:

Միմյանց հետ սերտ շփման մեջ, անխղճի կապի մեջ գտնվելով ձեռք-ձեռքի տված երկար ժամանակ ընթացել են այդ փոք-

¹ О «кавказской версии Библии в грузинских палимпсестных фрагментах», ТРКФ, с. I, էջ 56.

² И. А. Орбели «Марр как археолог», проблемы истории докапиталистических обществ, 1935 թ., № 3—4, էջ 56.

³ Рецензия на работу Н. Г. Адонца, ХВ, с. V, էջ 66.

րիկ եղբայր-ժողովուրդները՝ վրացիները և հայերը, միասին տանջվելով, միասին ուրախանալով, միասին տանելով բոլոր ձախորդությունները, և ստեղծելով կուլտուրայի ընդհանուր մեծ գործը: Նրանք չէին կարող միմյանց վրա շագղել և ազդում էին: Հիմա հանդես են գալիս ինչ որ շովինիստ-ինքնակոչներ և, հակառակ իրենց ժողովրդի ճնշող մեծամասնության կամքին, վերափորում են մեծ դիտնականին, որը հավասարապես թանկ է ինչպես հայերի, այնպես էլ վրացիների համար: («Приазовская Край» թերթ, 15-ը հունվարի, 1917 թ. № 15):

«Մեր ժամանակ, երբ այնքան շատ ուժեր և ուշադրություն է նվիրվում մեր փոխհարաբերությունների բնությունը պարզելուն, փոխադարձ ըմբռնողության և հարգանքի լավագույն միջոցն է՝ փոխադարձ ծանոթությունը մեր ներկային և անցյալին, մանավանդ երբ այդ փոխհարաբերության գործում մեր ղեկավարն է հանդիսանում այնքան անաչառ և ձեռնհաս մի անձնավորություն, ինչպիսին արդարացիորեն հանդիսանում է ակադեմիկոս Մառը: Այս տեսակետից Ն. Յա. Մառի դերը մեր ազգամիջյան փոխհարաբերություններում կարող է դառնալ կանխորոշող: Նրա հաշտարար և մերձեցնող խոսքին հավասար հարգանքով են վերաբերվում կովկասի բոլոր ժողովուրդները, և եթե կովկասյան ժողովուրդների համերաշխությունն անիրագործելի երազ չէ, ապա նրան հասնելու ճանապարհը մեր հին անցյալի դիտական և խոր ուսումնասիրությունն է, որին նվիրված է ակադեմիկոս Մառի ամբողջ երկարամյա դիտական գործունեությունը» («Вест» լրագիր, 1916 թ. № 225):

Իսկական հումանիստ Ն. Յա. Մառն ուսումնասիրում էր ժողովուրդների լեզուները սիրով ու հետաքրքրությամբ, որ նա ցուցաբերում էր ոչ միայն դեպի նրանց անցյալը, այլև ներկան և ապագան: «Հետաքրքրությունը հատկապես դեպի ապագան և ոչ թե հնին կառչած լինելն է ստիպում հետազոտական հետաքրքրությունն ուղղել հավասար շահով թե դեպի անցյալ դարերի լեզուները, առանց բացասելու և մեռածները, թե դեպի բոլոր այսպես կոչված «հետամնաց» ժողովուրդների կենդանի լեզուները — ժողովուրդներ, որոնք արապետող ազգերի և դասակարգերի կողմից իրապես հետ են շարժվել մինչ այժմ կերտվող կուլտուրայի դիտակցական ակտիվ մասնակցությունից»¹:

¹ Яфетическая теория, էջ 10.

Ն. Յա. Մառը, բացահայտելով Կովկասի ժողովուրդների փոխհարաբերությունները, նրանց հնադարյան միասնության իսկական պատկերը, միշտ ընդգծում էր այդ միասնության ապագա մեծ դերը բոլոր ժողովուրդների համար՝ համամարդկային կուլտուրա ստեղծելու գործում:

Ժողովուրդների հնադարյան համերաշխությունը, որ բացահայտել է Մառը, այսօր, մեր մեծ պատմական օրերում մարմնավորվել է Սովետական Միության ժողովուրդների մարտական բարեկամության մեջ:

Ուստի ավելի ու ավելի մեծ սիրով ու շնորհակալությամբ ենք վերհիշում այսօր Ն. Յա. Մառին, — այդ մեծ գիտնականին, որն ապացուցել է ժողովուրդների համերաշխությունն ու եղբայրությունը հին դարերում և իր ուսմունքով պայքարել է հանուն ժողովուրդների այսօրվա մեծ եղբայրության, հանուն մարդկության լուսավոր ապագայի: